



Հակոբ Պարոնյան

Կամիքներ

Ոսկին ըսես նե՛ հետը խօսք չըլլար. գլուխը առեր կ'երթայ:

Այսօր հարիւր ութսուն, վաղը երկու հարիւր, հետեւեալ օրը երեք հարիւր, օր մ'ալ եթէ իւր կամքին թողուի, մինչեւ հինգ հարիւր պիտի երթայ բարեխնամ կառավարութեան կամացը հակառակ:

Տեսա՞ք ժողվելու եւ պահելու բանը, ոսկի պահելու է եղեր. բայց ո՞վ գիտէր, թէ այսչափ պիտի բարձրանար: Մենք ալ շատ անխոհեմութիւն ըրինք. ոսկի պահելու տեղ հին Թատրոնները ժողվեցինք պահեցինք: Ապո՛ւշ, ըսէր մէկը, սա Թատրոնները ոսկի չընե՛ս, ինչո՞ւ պահեր ես:

Ըսող չեղաւ ալ չէ, բայց մենք չհամոզուեցանք. մեր յամառութեան պատիժը քաշենք հիմա, որ սորվինք:

Դեսպանաժողովին վերջին նիստին վրայօք Եւրոպայէն դեռ լուր մը չառինք, որ հոն տեղի ունեցած բանակցութիւններն իմանայինք ու մեր ընթերցողաց հաղորդէինք, բայց կրնանք այժմէն վստահ ըլլալ, որ խաղաղութիւնը չպիտի խանգարի, ինչպէս որ մեր ազնուականաց կամատր գրուիլը ըսածնուս մէկ անժխտելի ապացոյցն է:

Ասկից գատ Իկնաթիեֆի սնտուկներուն խելօք նստիլն ալ կը հաստատէ, որ խաղաղութիւնը չպիտի վրդովի. եթէ պատերազմի ամենափոքր նշան մը

երեւնար՝ սնտուկները իսկոյն դէպի Վոսփոր պտտելու կ'երթային:

Ռուսիան մեծ գոհողութիւններ ըրած է եւ կ'ընէ եղեր (եթէ հարկը պահանջէ) խաղաղութեան պահպանութիւնը համար: Անգղիոյ թագուհոյն սպառնալիքներն ալ կը յիշեցնեն մեզ այն առակը, ուր մայր մը իւր տղուն կ'ըսէր. «Եթէ այսպէս շարունակ լաս՝ արջուն կու տամ գրեզ, խելքդ գլուխդ ժողվէ՛»:

Արջը կը լսէ այս խօսքը եւ մինչեւ իրիկուն դռան առջեւ անօթի կը սպասէ, որ տղան լայ ու մայրը գայն իւր առջեւ նետէ:

Տղան կու լայ, արջը կ'ուրախանայ, բայց վերջապէս իր խաբուած ըլլալը իմանալով, ձայնը կը քաշէ եւ մեծ տրտմութեամբ ետ կը քաշուի:

Չգիտենք վաղը ի՛նչ պիտի ծնի, հիմակուան ծնածը պզտիկ մուկ մ'է:

Ստոյգ աղբիւրները ցամքած են...

Ո՛վ սախաներ, ստոյգ աղբիւր մը ցոյց տուէք ինձ, որ դեսպանաժողովոյ հինգշաբթի ատուր նիստին վրայօր քանի մը կաթիլ լուր առնեն ու ընթերցողացս ծարան անցունեն:

Հետաքրքրութիւնը որկրամտութիւն է, ըսաւ գրիչ մը, տեսնելը կամ իմանալը կշտանալ է:

Մենք քանի մը ատենէ ի վեր որկրամտութեան վերջին ծայրը հասած ենք:

Դեսպանաժողովոյ անդամները խոստովանահայր ըլլալու մարդիկ են. քանի մը շաբաթէ ի վեր Ռուսիան ու Թուրքիան խոստովանանք կ'ընեն, անոնց մեղքերը կ'իմանան, բայց գաղտնիքը դուրս չեն հաներ: Այս մարդիկ աւելի գաղտնապահ ըլլալու յարմարութիւն ունին՝ քան թէ հաշտարար:

Պտտող գրոյցներուն նայելով՝ մեր կառավարութիւնը մերժեր է իրեն եղած առաջարկութիւնը, բայց իր մերժման մերժումով պատասխանուեր է: Նստող

գրոյցներուն նայելով՝ մեր կառավարութիւնն ալ գոհողութիւն ընելով՝
պատերազմի երկիւղները պիտի փարատէ եղեր: Պատողներո՞ւն հաւատանք թէ
նստողներուն:

Տատկող լուրերուն նայելով՝ դեսպանաժողովը Վիեննա պիտի մեկնի եւ հոն
պիտի ընէ եղեր իւր նիստերը... մինչեւ հիմա եղած նիստերը ասկից վերջը ուր
նստելիքնին որոշելու համար էին: Դեսպանաժողովին տեղը փոխելու տեղ աւելի
լաւ չէ՞ր ըլլար՝ եթէ անոր անդամները փոխէին:

Պատկող լուրերուն նայելով՝ ուլթիմաթումը Վիեննայէն պիտի դրկեն եղեր...
Վիեննայի մէջէն աղէկ ուլթիմաթում ալ կ'ելլէ եղեր, մենք գիտէինք, որ միայն
գարեջուրն աղէկ է: Եթէ ուլթիմաթումնին ալ իրենց գարեջուրին պէս է՝
ուշադրութեամբ խմելու է, որովհետեւ մէջը ավիոն կը գտնուի եւ կրնայ մեզի
չափէն աւելի քնացունել:

Մեր թշնամին իր խելքովն այնպէս համոզուած է, որ իրաց այս վիճակը որչափ
աւելի երկարի՝ այնչափ աւելի կը վնասէ մեզի: Այս համոզմամբ է, որ գործերը
մինչեւ այսօր երկնցուց եւ ասկից ետքն ալ պիտի երկնցնէ:

Ա՛յ ասկից ետքը ուզածին չափ թող երկնցնէ, իրաց այս վիճակը որչափ երկարի՝
մենք ալ այնչափ թղթադրամ պիտի կոխենք ու դրամական տագնապին մէջ
չպիտի իյնանք:

Ասոր ալ բան մը չկրնար ըսել ա՛, թողթերը քրիստոնեայ չեն, նամանաւանդ սլաւ
չեն, որ անոնց ալ ճնշուիլը տեսնելով՝ վիճակնիս բարութել ուզէ:

Իրաց այս վիճակը որչափ ուզէ՝ թող երկնցնէ, մեզի բան մ'ալ չկրնար ընել, միայն
թղթադրամ կոխել կու տայ:

Դեսպանաժողովն ա՛յլ համը փախցունել սկսաւ:

Մինչեւ հիմա վեց նիստ ըրաւ:

Ահա բոլոր ըրածը:

Ամէն մարդ հետաքրքրութենէ ճաթելու վիճակին հասաւ. դեսպանաժողովին հոգն անգամ չէ. գործելու մասին իրեն օրինակ բռնած է կրիան:

Մէկ նիստին մէջ առաջարկութիւն մը կ'ըլլայ:

Երկրորդին մէջ այդ առաջարկութիւնը կը մերժուի:

Երրորդին մէջ այդ մերժումը կը մերժուի:

Չորրորդին մէջ ինչո՛ւ համար մերժուելուն պատճառները կը բացատրուին:
Հինգերորդին մէջ այդ բացատրութիւններուն մութ կէտերը կը լուսաւորուին:

Վեցերորդին մէջ լուսաւորեալ կէտերը կը մթննան:

Ահա քեզի վեց նիստ, որ մէկ նիստ չարժեր:

Մենք ալ կը սպասենք, որ քիչ օրէն ամէն բան լմննայ, որպէսզի առեւտուրը կանոնաւորուի եւ ամէն մարդ ինչ ընելիքը գիտնայ:

Ես ալ շատ սակարկութիւն ըրած եմ, բայց այսչափ չեմ երկնցուցած:

Պատուաւոր մարդ մը կ'ըսէ.

Այսչափ կրնա՞ս տալ:

Չեմ կրնար տալ:

Խաթերդ համար մէկ երկու բարայ ալ կը ձգեմ:

Գործիս չգար:

Բարի եկար, հազար բարի:

Լմնցաւ, գնաց:

Եկուր հիմա ասոնց ըրածին.

Ինչո՞ւ չես կրնար տալ:

Տալու ըլլաս նե՛ գէշ չըլլար:

Չտաս նե՛ վախճանդ գէշ կ'ըլլայ:

Մենք կը փափաքինք, որ տաս:

Թո՛ղ ներեն մեզի վեց տէրութեանց ներկայացուցիչները, իրենց ըրածը ասկից առաջ շուկայի թեզկեհտարները կ'ընէին. անցնողներուն փեշէն կը քաշէին, խանութնուն մէջը կը նստեցնէին ու համոզելով ստակնին կ'առնէին:

Թո՛ղ դարձեալ ներեն մեզի այդ այլեւայլ պատուանուններով ներկայացուցիչները, անընդունելի առաջարկութիւններ կ'ընեն ու կ'ըսեն թե՛ մեր աղէկութեանը համար կ'աշխատին կոր:

Մէկը իւր ստացուածքէն կապտել եւ վերջը ըսել, թէ քու աղէկութեանդ համար անանկ ըրի, կարծես քիչ մը տրամաբանական չէ. դուն ի՞նչ կ'ըսես, Օգսէն Էֆենտի:

Տեսէք ուզածնին ալ ինչ է:

Ա. Գարատաղին քիչ մը տեղ տալ:

Բ. Սերուիոյ սահմանը ընդարձակել (քիչ մը տեղ ալ Սերուիոյ տալ, ըսէ լմնցուր, ճարտասանութիւնը չվիրատրուիր):

Գ. Պուլղարիոյ մէջ երկու առանձնաշնորհեալ գաւառ կազմել (ինքնօրինութիւն ըսէ, մի՛ վախենար):

Դ. Ամէն նահանգի ժողովրդեան մեծագոյն մասին լեզուն գործածել իբրեւ պաշտօնական լեզու (տաճկերէն լեզուն վերցնել):

Ե. Յիշեալ գաւառաց տուրքերը քիչցնել (հապա լրագրաց փոփոխութիւն... հա, իրաւ, լրագիրները գաւառ չեն):

Զ. Քաղաքական ոստիկանութիւն կազմել (յաւիտեանս յաւիտենից, ամէն):

Եթէ ասոնք տալու ըլլանք՝ մեզի համար ասկից աղէկ բան չկրնար ըլլալ եղեր. սրտնք տալու մէջ ի՛նչ աղէկութիւն կայ մեզի համար, չկրցի հասկնալ: Ի՛նչ բարերար մարդոց ձեռքը ինկանք: Աստուած իմ, եթէ Աստուած չընէ, վաղը ելնենք իրենց ըսենք, թէ մեզի քիչ մը բարութիւն ըրէք՝ Պոլիսը տուէք, պիտի ըսեն:

Ասոնց խօսքին նայելով՝ մեզի համար աղէկութիւնը ունեցածնիս չունեցածնիս ասոնց յանձնել է:

Կան ըսելիքներ, բայց չեն ըսուիր:

Կարծեն ամէնքդ ալ գիտէք, որ դեսպանաժողովին առաջարկութիւնները մերժեցինք. մերժեցինք կ'ըսեն նէ՛ ես չմերժեցի, այսինքն մերժեցին եթէ մէջերնիդ չգիտցող կայ՝ թող գիտնայ, որ դեսպանաժողովին առաջարկութիւնները մերժեցին(ք):

Եւ արդարեւ ընդունուելու բաներ ալ չէին:

Մեծ ժողովին մէջ երբ կարգը եկեր է մեր փոխանորդին կարծիքն առնելու՝ փոխանորդ հայրը՝ որ նոյն միջոցին խորին մտածմանց մէջ ընկղմած է եղեր, ոտքի վրայ ելեր սապէս պատասխաներ է.

Էֆենտիմ, այս մարդը չենք կրնար կնիկէն բաժնել, իրարու հետ միշտ կապուած պիտի մնան:

Ի՞նչ կ'ընէք կոր, կ'ըսէ՛ մշտելով իրեն քով նստող մին, դատաստանական խորհրդոյ մէջ չենք:

Այո՛, Էֆենտին, մենք ձեզի հետ միշտ կապուած պիտի մնանք, պատասխաներ է սքափելով:

Կա՞յ մարդ մը, որ նախ իր շահը չխորհի:

Էնֆիեճեան հայրն ալ իրեն եղած հարցման պատասխանելու տեղ չերքեզներու Ասիա փոխադրուելուն դէմ բողոքեր է. ի՞նչպէս եղեր է, որ Հասունի դէմ չէ բողոքեր...

(Սա չերքեզներուն ալ տեղ մը չգտնուեցաւ, որ այս հոգէն խալսէինք. եթէ ինձ հարցուի, կ'առաջարկեմ, որ Սալիսպրիի տունը փոխադրուին չերքեզները:)

Շատ հաւանական է, որ այս երկու փոխանորդներն, ի վարձատրութիւն իրենց ցոյց տուած պերճախօսութեան, ծերակոյտի անդամ ընտրուին:

Խօսքը ձերն է, Մասիս:

«Կ'ըսուի թէ Գարատաղի ժողովրդեան մէջ աւանդութիւն կայ, թէ Աստուած աշխարհս ստեղծած ժամանակ՝ լեռները պարկի մը մէջ լեցուցած՝ աշխարհի ամէն կողմը կը ցանէ եղեր, յանկարծ պարկին յատակը պատռելով՝ մէջը մնացած լեռներուն ամէնն ալ Գարատաղի երկրին վրայ թափեր են: Մենք ալ կ'ըսենք թէ՛ արդեօ՞ք նախախնամութիւնն Ադամ նախահօր մեղացն ի պատիժ աշխարհի վրայ ցաւերն ու վիշտերը ցանած ժամանակ պարկին յատակը պատռելով՝ մեծ մասն Հայաստանի վրայ թափեր է»:

Շատ իրատունք ունի Մասիս այսպէս խօսելու, եթէ նախախնամութիւնը իր կարել տուած պարկին խումաշին քիչ մը ուշադրութիւն ըներ՝ ո՛չ պարկը կը պատռէր, ո՛չ ալ այսչափ դժբախտութիւն կը թափէր Հայաստանի վրայ:

Նախախնամութիւնը հրէաներէն ծախու առած ըլլալու է ամերիքանը, որովհետեւ ասոնք մինչեւ այսօր աղէկ ապրանք ծախելու սովորութիւնը չունին:

Նախախնամութիւնը պարկին պատռիլը տեսնելով՝ կ'երեւի որ գայն նորէն կարել տուեր ու թափածները ժողվելու համար Հայաստան իջեր է, բայց թափած դժբախտութիւնները ժողվելու տեղ՝ սխալմամբ խաղաղութիւն, երջանկութիւն, պատիւ եւ կեանք ժողվեր, պարկին մէջ լեցուցեր, առեր քալեր է:

Չմեղադրենք նախախնամութիւնը, որովհետեւ այն ատենները Սահմանադրութիւն չկար եւ խումաշներու կարեւորութիւն չէր տրուեր. ինքզինքնիս մեղադրենք, որ Սահմանադրութիւն ունինք եւ դարձեալ չկրցինք քիրտերու բարբարոսութենէն խալսիլ:

Թող քիրտերը շարունակեն իրենց աւարառութիւններն ու սպաննութիւնները մինչեւ մարտ մէկ. անկէ ետքը կը տեսնուինք հետերնին:

Կըսուի թէ Սալիսպրին կամ ըստ Լեւրնթի սալթպորուն մայրաքաղաքէս մեկնած ատենը Բ. Դոան մասնաւորապէս յանձնարարեր է յոյն ժողովուրդը:

Հիմա շատերը կը հարցունեն, թէ արդեօք ի՞նչ ըսաւ յունաց համար:

Եթէ մեր լսածը ստոյգ է՝ Սալիսպրին արտաքին գործոց պաշտօնէին գրուցեր է, որ Յունաստանէն պիտի անցնին, վրաս ալ քիչ մը ստակ կայ, կը խնդրեմ, որ ինձի քանի մը մարդ տաս, որ հետս գան:

Կըսուի թէ արտաքին գործոց պաշտօնեան սիրով ընդուներ է Սալիսպրիի այս առաջարկութիւնը:

Ա՛հ, արդար առաջարկութիւնները ե՞րբ մերժած է Բ. Դուոր:

Միլան իշխանին հաշտութիւն կնքել ուզելը կարդացած ատենս, ժամանակաւ դպրոցին մէջ ֆալսիսան ուտելս, կամ ս. պատրիարքին ականջէս քաշելը միտքս կու գայ կոր:

Մեղայ, մեղայ:

Ինչո՞ւ ըրիր, Միլանիկ, ես չըսի՞ր քեզի, որ խելօք նստիս:

Մէյ մ'ալ չեմ ըներ, մեղայ:

Ինչո՞ւ ըրիր:

Ես չըրի, Կորչաքոֆը ըրաւ:

Ինչո՞ւ անոր խօսքերուն ականջ կախեցիր:

Քեզի թագաւոր պիտի ընեմ, ըսաւ:

Ասկից վերջը խելօք պիտի նստի՞ս:

Այո՛:

Վարժապետիդ դէմ չպիտի խօսիս ա՛:

Բնաւ:

Մինչեւ անգամ քեզի անօթի ալ պահէ նէ՛ր քերանդ չպիտի բանաս ա՛:

Չէ:

Ապրիս, տղաս, տեսա՞ր հաւատարիմ աշակերտը, ես ալ ասանկ աշակերտը կը սիրեմ ահա. ելի՛ր տեղդ գնա ու գործդ նայէ:

Այսչափ ծեծի փոխարէն նուէր մը չպիտի՞ տաք ինձի:

Ի՞նչ նուէր:

Չուորնի՞կ է, ի՞նչ է, բան մը կ'ըսեն կոր:

Տե՛ղդ գնա, քեզի Չուորնիկ մը կու տամ որ...

Բայց տալու ըլլաս նէ՝ գիտցիր որ շատ ձեւաւոր պիտի ըլլայ տունս:

Չըլլա՛ր, հիմա քեզի՛ տամ նէ՝ Նիքոլան ալ կ'ուզէ:

Ի՞նչ կ'ըլլայ, անոր ալ տուր, ան ալ օտարական մէկը չէ՛ եա:

Դուն անոր գործին մի՛ խառնուիր:

Խեղճ Միլան... սլաութիւնը իւր ածելին քու մօրուքիդ վրայ փորձեց:

Բարլամենթոն քանի մը օրէն պիտի բացուի:

Հիմակընէ ամէն մարդ հետաքրքրութեամբ կը սպասէ իմանալ, թէ ինչ պիտի խօսի արդեօք օրը հազար ոսկի եկամուտ ունեցող Մարքի տը Սալիսպրին արեւելեան խնդրոյն վրայ:

Միայն ես հետաքրքիր չեմ, որովհետեւ գիտեմ ի՛նչ ըսելիքը Լրագիր գուշակած էր, ինձի ալ ըսաւ:

Եթէ ժամանակ ունիք մտիկ ընելու՝ ձեզի ալ կ'ըսեմ:

Մարքի տը Սալիսպրին բենը պիտի ելնէ ու քիթը բերանը սրբելէն ետքը՝ սապէս պիտի խօսի.

Տեարք եւ տիկնայք.

Ձեր հրամանացը համեմատ Պոլիս գացի: Տեսայ հոն կղզի մը, որ իւր դրից տեսարանի, օդի եւ գեղեցկութեան, վերջապէս ամէն կողմէ մեր լորտ եղբայրներուն ուշադրութեանը արժանի է:

Տեարք իմ, այն կղզիին մէջ կերանք մենք ստրիտեաներ, որք շատ համով են, եւ մանաւանդ Պորտոյի գինիով շատ աղէկ կ'ուտուին կոր: Եթէ ժողովդ կ'ը բարեհաճի, քուէի դնէ, օր մը որոշէ մէկտեղ ուտենք այդ ստրիտեաներէն:

Ձայն մը. Ժողովս վստահութիւն ունի ձեր վրայ:

Կ'աղաչեն բարլամենթոյին նախագահը, որ բարեհաճի այդ ստրիտեաները թագուիոյն յանձնարարել: Իրաց այս վիճակին մէջ Պոլսոյ փողոցներն ալ կը պտտւէինք, ժողովուրդը առջի բերան շատ սիրով ընդունեց զիս, բայց վերջէն սալաշար, սալաթ պորու դրաւ իմ անունս:

Այն տեղի ժողովուրդը գլուխը կարմիր բան մը կը դնէ կոր, վրայէն ալ սեւ դերձաններ կը կախէ կոր, օղին ալ շատկեկ կը խմեն կոր:

Խօսքս եզրակացնելով կ'ըսեն թէ՛ ըստ ձեր հրամանաց քոնֆերանսը ըրինք, եւ ըստ ձեր հրամանաց քոնֆերանսին մէջ բան մը չըրինք:

Ծափահարութիւնք:

Օրը հագար ոսկի եկամուտ ունեցող Մարքի տը Սալիսպրին ատենաբանութիւնը լննցնելուն պէս երթայ իւր աթոռը պիտի նստի եւ ժողովը միաձայն հաւանութեամբ շնորհակալութեան քուէ պիտի տայ Սալիսպրիին:

Եւ իրօք, Սալիսպրին՝ եթէ ճշմարտախօս մարդ է՝ ուրիշ կերպ չպիտի կրնայ խօսիլ:

Սպասենք ու տեսնենք:

Սա Կորչաքոֆը ուրիշներուն գործին մէջ մտնելը շատ կը սիրէ կոր, մեր Քրիստոստոր էֆենտիին պէս, որ ազգին ծառայութիւն պիտի ընեն ըսելով՝ ամէն պաշտօններու մէջ կը մտնէ:

Կորչաքոֆը հիմա սկս եր է միւս տէրութեանց հարցունել, թէ ի՞նչ ընթացք պիտի բռնեն:

Իրեն ի՞նչ պէտք է ուրիշներուն բռնելիք ընթացքը. ինքը թո՛ղ ուզած ընթացքը բռնէ. ուրիշներու գործին ինչո՞ւ կը խառնուի:

Եթէ ես ըլլայի միւս տէրութեանց տեղը՝ բռնելիք ընթացքս կը պահէի եւ չբռնելիք ընթացքս կը յայտնէի սա ծերունիին, որ հացին օխան երեք ու կէսի սկսաւ մեզի կերցունել, որ երբ ստակ չգտնանք հաց առնելու եւ անօթութենէ մեռնինք՝ ուրախութեամբ պիտի պոռայ.

Ահա հիմա բարութեցաւ քրիստոնէից վիճակը:

Աս ի՛նչ ձախող բարերարի հանդիպեցանք, Աստուած իմ:

Բարեկենդանի մէջ ենք...

Իմաստութեան դուրսն ենք...

Նախնիքներէ մնացած սովորութիւն մ'է, որ մարդիկ տարին անգամ մը կը խենթենան, տարին անգամ մը խելքերնին կիրակի կը բռնէ ու խենթութիւննին կ'աշխատի:

Արդ, տարին անգամ մը ամէն մարդ, այր ու կին, ծեր եւ տղայ, հարուստ եւ աղքատ, երեսին դիմակ մը կ'անցունէ, փողոցներուն մէջ, տուններուն մէջ կը պարէ ու կը ցատկէ:

Այսօր Եգոբոսն ալ չկրնար բարկանալ, ինչու որ ամառը երգեցինք, ձմեռը կը պարենք կոր:

Միայն մենք չենք, աշխարհիս սանձերը բռնող քաղաքագէտներն ալ երեսնուն դիմակ կ'անցունեն (ամէն օր): Բայց անոնք մեզմէ որոշուելու համար մարդու պատկեր չեն դներ, այլ կենդանիի պատկեր կը դնեն երեսնուն վրայ. օրինակի համար մին՝ արջու պատկեր, ուրիշ մը՝ աղուէսի պատկեր, ուրիշ մը՝ գայլի պատկեր եւ այլն, եւ այս պատկերներով իրարու ներկայանալով՝ քատրիլ կը խաղան ու մեր բախտը կ'որոշեն...

Այս տարուան քատրիլին մէջ հաւանական է, որ Ռ-ուսիան Անգղիոյ հետ վիզավի ըլլայ: Իսկ ժողովուրդը ամէնուն հետ կ'ուզէ վիզավի ըլլալ, միայն մէկ քանիներու

հետ չուզեր:

Որո՞նց հետ:

Որո՞նց հետ:

Իր պարտաստերերուն հետ:

Խաւարը դեռ չբարեհաճեցաւ իւր թելերը վերցնել արեւելեան խնդրոյն վրայէն, հետեւապէս արեւելեան խնդրոյն ապագան իմ ապագայիս պէս մութ է:

Սըր Սթաֆորթ Նորթքրթ, Մարքի տը Հարթինկթըն, Մըսթըր Տիգրայելի, Գոնթ Տերպի, Մարքի տը Սալիսպրի, Աստուծոյ համար խօսելով, բաւական կը խօսին կոր մեր խնդրոյն համար առանց լոյս մը տալու... ի՛նչ օգուտ, որ մեր խնդիրն խօսքէն աւելի գործի պէտք ունի: Եթէ խօսքով կարգադրուէին մեր գործերը, մինչեւ հիմա ինչո՞ւ կարգի դրուած պիտի չըլլային:

Ինչեւէ, որովհետեւ իշխանութիւն չունինք ուրիշին խօսելու ազատութիւնը բռնաբարելու, թողունք իրենց խօսիլ եւ մեր խնդիրներովը զբօսնուլ այո՛, զբօսնուլ, որովհետեւ չգիտեմ թէ բարլամենթոյին մէջ ի՛նչ պիտի խօսէին մեր անգղիացի եղբայրները՝ եթէ արեւելեան խնդիրը չըլլար:

Իսկ մենք քսան օր ալ սպասենք, որպէսզի խաւարը իւր թելերը վեր առնէ ու մեր խնդիրը իւր ապագայովը մէկտեղ ինքզինքը ցցունէ:

Սպասելէն ուրիշ ճար չունինք:

Լա Վերիթէ (ճշմարտութիւն) անուն լրագիր մը կը հրատարակուի կոր, կարդացած ունի՞ք այդ լրագիրը:

Առջի օրը իմ ձեռքս անցաւ հատ մը այդ ճշմարտութիւն անուն լրագիրէն եւ քիչ մը խնդացի, որովհետեւ իրեն լրագրին նիւթ ընելիք բանը իր լրագրին անուն դրեր է,

Եւ եթէ երբեք իր տողերուն մէջ ճշմարտութիւն չգտնանք, պատճառն այն է, որ փնտռածնիս իր լրագրին ճակատը փախեր ապաստաներ է:

Յիշեալ թերթին մէջ մեր գտած ճշմարտութիւնն այս է ահա:

Ականջնուդ օղ ըլլայ, որ չմոռնար, եւ ձեր գաւակները տեսանելի եւ անտեսանելի փորձանքներէն զգուշացնելու ատեննիդ իրենց ըսէք.

Ձաւա՛կս, երբ մեծնաս եւ ստիպուիս գաւառները երթալ, եւ երբ լսես, օր մը, որ նոր կուսակալ մը գալու վրայ է այն քաղաքին, որու մէջ կը գտնուիս՝ չըլլայ որ տղայութիւն ընես եւ կուսակալը դիմատրելու երթաս, որովհետեւ կուսակալ մը դիմատրելը մեծ յանցանք է, եւ այս յանցանքիդ համար հրացան կը պարպեն վրադ:

Թերեւս ձեր գաւակները առջի բերան չհաւատան ձեր քարոզին եւ ձեր վրայ խնդան, զանոնք հաւատացնելու եւ ձեր վրայ շխնդացնելու համար առջի օրուան Մասիսն առէք ու կարդացէ՛ք:

«Վանէն Տէր Երեմիա եպիսկոպոս լուր կու տայ հեռագրով ի պատրիարքարան՝ թէ նորընտիր կուսակալն ազգին կողմէն դիմատրելու դրկուած Թերզիպաշեան Յարութիւնի վրայ հրացան պարպեր է Տերվիշ անուն քիւրտ մը եւ վիրատրեր է: Ոճրագործը բռնուեր է»:

Եթէ ձեր գաւակները հարցունեն թէ՛ ոճրագործին ի՞նչ պատիժ տնօրիներ են, պատասխանեցէ՛ք իրենց թէ՛ հայ մը սպաննող քիւրտերը ձերբակալութեան կը դատապարտուին եւ ս. պատրիարքն ալ մէկ շաբաթէն մինչեւ վեց ամիս թաքրիդ գրելու կը դատապարտուի:

Թերեւս ձեր գաւակները թերահաւատ գտնուին եւ չհաւատան.

թերահաւատութեան մի՛ վարժեցունէք զիրենք, տարուան մը մէջ տեղի ունեցած սպաննութեանց հեղինակները քովէ քով շարեցէ՛ք, եւ անոնց անպատիժ մնալը զգուցէ՛ք իրենց. սակայն այդ սպան ութեանց ատենները սահմանադրութեան հրատարակուած չըլլալն ու իտարեյի քեյֆիյէի տակ գտնուած ըլլալնիս ալ

իմացուցէք իրենց...

Ականջնուդ օղ ըլլայ... քիթերնուդ ակնոց ըլլայ... գլուխնուդ շինէնն ըլլայ ի՛նչ ըսեն որ չմոռնաք եւ այս ըսածներս ձեր գաւակներուն, թոռներուն, թոռներու թոռներուն եւ անոնց ալ թոռներուն ականջը հասցնէք, որպէսզի դարուց ի դարս մեր ականջներն ի վար հնչուի այն խօսքը թէ՛ կուսակալ մը դիմատրելը յանցանք է:

Վարպե՛տ, Կիրակո՛ւս, Մարգա՛ր... ջուր բերէ՛ք, ջուր...

Ի՞նչ կայ, կրա՞կ կայ:

Չէ՛, չէ՛, հանընը մարեցաւ, շուտ ըրէ՛ք, վարպետ, դուն ջուրը բեր, Կիրակո՛ւս, դուն բժիշկին վագէ, Մարգա՛ր, դուն ալ դեղագործին գնա... գետնին տակը անցնի սա Նիկոմիդիայի աղքատներուն վիճակը...

Ա՛հ, ո՛հ, ո՛հ...

Արթնցա՞ր, անուշիկս... ես կատակ ըսի, խե՞նթ եմ, որ շրջագգեստիդ ստակը Նիկոմիդիայի աղքատներուն տամ...

Չիյտես որչափ գէշ եղայ, երբ ըսիր թէ շրջագգեստ չպիտի շինեն եւ անոր ստակը Նիկոմիդիայի աղքատներուն պիտի դրկեն, կարծես թէ գլուխս ի վար պաղ ջուր լեցուցին. նիկոմիդիացիները, ըսի մտքէս, ինձմէ ատելի կը սիրէ կոր, ահ, օֆ... անօթութենէ կը մեռնին կոր տեյի այս տարուան պալոններուն անցեալ տարուայ շրջագգեստո՞վ երթամ ես:

Չէ՛, չէ՛, հանըմ, սիրտդ մի՛ հատցուներ, այս տարուան տեքութեղ ալ կը շինուի:

Դուք ալ, նիկոմիդիացի եղբարք, քիչ մը ակոռանիդ սեղմեցէք, որ Պոլսոյ հանըմները ձեր պատճառով չմարին:

Ինքզինքնին ազգասէր ծախելով ազգային պաշտօններէ ստակ վաստկողներուն անունները թերթերնուս մէջ անկողմնակալութեամբ հրատարակել որոշած ըլլալով՝ կը խնդրենք այդ ազգասէրներէն, որ հաճին անունին իմացունել մեզ, որպէսզի սխալմունք մը ընելով ճշմարտութիւնը չվիրատրենք:

Անգղիոյ ժողովներուն մէջ գրուցուած խօսքերէն եթէ բան մը հասկցաք՝ կ'աղաչեմ, ընթերցողք, ինձի ալ հասկցուցէ՛ք, որ ես ալ ընթերցողացս հաղորդեմ:

Թուրքիոյ համար չպիտի պատերազմին եղեր:

Թուրքիոյ ամբողջութիւնը պիտի պահեն եղեր:

Թուրքիան եւ Ռուսիան դէմ առ դէմ պիտի ձգեն եղեր:

Ազնիւ լորտեր, մարքիներ, ըսել կ'ուզէք, որ Գարատաղին բան մը չտանք, եւ եթէ տալու ըլլանք, Թուրքիոյ ամբողջութիւնը պահելու համար մեր տուածը Գարատաղէն ետ պիտի առնէք:

Ողջ ըլլաք, մեր ալ ուզածն այս է. մենք տանք, դուք առնէք:

Կարծեմ ձեր ուզածն ալ այս է:

Կ'ուզէ՞ք մէկու մը բարի կամ չար ըլլալը հասկնալ, ձեռննիդ անոր գրպանը խոթեցէք եւ եթէ որ բան մը չգտնաք հոն, մի՛ վախնաք այն մարդէն, որովհետեւ աշխարհիս ամենէն բարի մարդն է այն. իսկ երբ տեսնէք, որ մարդ մը առանց գրպանի բանթալոն մ'է հագեր, մօտեցէ՛ք, եւ երկրպագութիւն ըրէք իրեն, որովհետեւ անիկա սուրբ մ'է. եւ անանկ սուրբ մը հիմա սրբոց մէջ ալ հագուագիտ է: Ընդհակառակն, երբ տեսնէք մարդ մը, որուն գրպաններուն մէջ ստակ կը գտնուի, հեռացէ՛ք իրմէ, փախէ՛ք իրմէ, որովհետեւ այդ մարդը բարի չէ՛, եւ կրնայ ձեզի վնաս հասցնել:

Ինչպես որ բժիշկները մեկու մը հիսանդ կամ առողջ ըլլալը հասկնալու համար անոր լեզուն կամ բազկերակները կը քննեն՝ ես ալ մեկու մը բարի կամ չար ըլլալը իմանալու համար՝ անոր քսակը կը քննեն, եւ չեն սխալիր:

Ինչ որ ուզեն, թո՛ղ ըսեն, ես կ'ըսեն, որ բարի մարդը ստակ չկրնար վաստըկիլ, եւ պէտք չէ որ վաստկի: Ստակ վաստկելու համար ստախօսութիւն պէտք է, սուտ երդում պէտք է, երբեմն ուրիշին կոկորդէն բռնել, սղմել պէտք է, ով որ այս ըսածներուս չհատար, կ'աղաչեն, կը խնդրեն, շնորհ ընէ, թո՛ղ ցցունէ մէկը ինձի, որ Աւետարանի հետեւելով սպասատրներու, կառքերու, վարժապետներու, ձիերու եւ աղուոր պեպլեմներու տէր եղած ըլլայ: Բայց, չկայ մէկը, որ այս մասին վիճաբանութեան մտնայ հետս, հարուստներն իսկ կ'ընդունին այս քարոզս, ճշմարտութիւններս, բայց ինքզինքնին արդարացնելու համար կ'ըսեն թէ՛ առեւտուրի մէջ սուտ խօսիլը, մարդ խաբելը բնաւ չարութիւն չնշանակեր, եւ որպէսզի ընդհանրացնեն այս սուտ ճշմարտութիւնը կամ այս ճշմարիտ ստութիւնը, մէջերնին առած մ'ալ հնարեր են ու կ'ըսեն, տոսթուր քանթարլան, արըշվերիշ մըսքալլան: Այս առածը կրկնելէն ետքը աչքդ անգամ կը գողնան եթէ յաջողին:

Բայց ինչո՞ւ տարակուսինք այս ճշմարտութեան վրայ, միթէ այսօր չե՞նք տեսնար կոր մարդիկ, որ իմ շահս այսպէս կը պահանջէ ըսելով ուրիշներու դժբախտութեանը պատճառ կ'ըլլան կոր եւ առանց ամչնալու կ'արդարանան կոր:

Չարուստ մարդու մը ձին ինձի կից մը կու տայ եւ մարմինս ջարդ ու բուրդ ընելով՝ գետինը կը պատկեցնէ կոր գիս. ներկայ եղողներէն մէկը չհամարձակիր կոր քովս մօտենալու, թեւս բռնելու եւ գիս վերցնելու, որպէսզի ձիուն արժանապատութիւնը չվիրաւորուի, որպէսզի ձիուն տէրը չելնէ վաղը իրեն ըսէ թէ՛ իմ ձիուս հարուածած անձին դուք պաշտպանութիւն ըրած էք եղեր, եւ ասիկա իմ ձիուս անպատութիւն կը բերէ:

Մարդկութեան համար քրտինք թափող շննաց աշխարհիս վրայ. առաքիւնութիւնն իր նշանակութիւնը կորուս. անբարոյականութիւնը բարոյականութեան դիմակով արձակ համարձակ կը պտտի կոր եւ Թատրոնը կարող չըլլար կոր այս գեղծումները բառնալու. ոչ միայն կարող չըլլար կոր, այլ զանոնք բառնալ աշխատելուն համար ծաղու նշուակ կ'ըլլայ կոր... Մէկէն իբրեւ ճգնաւոր կը

բամբաստի կոր, ուրիշէն իբրեւ կրօնատր կը գրպարտուի կոր, մէկայլէն իբրեւ անզգայ կը հարուածուի կոր, ուրիշէն իբրեւ թշնամի յառաջադիմութեան կը նախատուի կոր, ապտալ կ'ըսեն կոր, խըմպըլ կ'ըսեն կոր: Հարուստ մը իրեն դիմողին բարութիւն չըրած ատեն՝ քթին տակէն Թատրոնին քեֆը փախսաւ ըսելով կը ծաղրէ կոր զիս, քաւալիէ մը իր տամային մէջքը սխմած ատեն՝ Թատրոնը չկրցաւ սա մարդկութիւնը օրինաւորութեան մէջ դնել ըսելով իր տամային հետ խնդալէն կը մարի կոր անատակը: Աւելին կայ. երեկոյթներու, պարահանդէսներու երթալու կը քաշուիմ կոր, որովհետեւ երթալուս պէս՝ մանչ, աղջիկ, այր եւ կին, հոն գտնուողները շուրջս կը պատեն կոր եւ կը սկսին կոր զիս քաշել:

Էֆենտի՛, սա ընտանեկան գեղծումները չկրցիք տակաւին շտկել:

Շիտակը, Էֆենտիին ձեռնարկութիւնը դժուար է, օրուան մը մէջ չկրնար գլուխ հանել:

Բայց մի՛ վհատիք. Էֆենտի, ապագան ձեզի պիտի օրինէ:

Էֆենտի, ուրիշ միջոց մը գտա՞ք սա մարդիկը ճամբայ բերելու, սա պարը վերցնելու է... պարը շատ անբարոյական բան է, ինչ ըսէք նէ՝ իրաւունք ունիք, Էֆենտի, չըլլայ որ դուք խաղաք:

Իմ ալ համբերութիւնս կը հատնի կոր, լապտերը վառելուս պէս ինքզինքս պատուհանէն վար կը նետեմ կոր. տուն երթալուս պէս սենեակիս վարագոյրները կը ձգեմ կոր, անկողինս կը մտնամ եւ գլուխս վերմակիս մէջ կը քաշեմ կոր, որպէսզի չտեսնամ իրենց երեսը, որոնք ամենայն համարձակութեամբ զարմանալով թէ՛ Թատրոնին պէս մէկը կրնայ եղեր տակաւին գտնուիլ այս դարուս մէջ, ապուշ մը գտեր ենք, թո՛ղ խօսի, մենք ալ հետը էյլենմիշ ըլլանք, կ'ըսեն կոր: Թո՛ղ որ անդին հազարաւոր պարկեշտ երիտասարդներ կան, որ զիս կը յարգեն կոր. ինչպէս որ միլիոնաւոր աղջիկներ կան, որ ինձի համար հոգի կու տան կոր. բայց ի՛նչ օգուտ, որ ասոնք բացառութիւններ են, եւ բացառութիւն մը որչափ ալ ստուար ըլլայ, չկրնար ընդհանուր կանոն ըլլալ:

(Բնաբան է շեղած չըլլալս իմացնելու համար պէտք է հոս յիշել, որ այս բացատիկ երիտասարդներն, աղջիկները գրպանը ծակ եղող կուսակցութեան կը վերաբերին):

Եւ ես ի՞նչ կ'ընեմ կոր ինձի եղած նախատանաց եւ անարգանաց դէմ, կը համբերեմ կոր, գիտնալով՝ որ իմ խօսքերուս արժէքը ասկից հարիւր տարի ետքը պիտի ճանաչուի, իմ խօսքերուս արդիւնքը իմ թոռներս (Աստուած պահէ զիրենք արեւելեան խնդիրէն) պիտի վայլեն: Միթէ Սոկրատ ալ չհալածուեցա՞ր, ես ալ Սոկրատէն պզտի՞կ մարդ եմ... Տեմիրճիպաշեան, Կիւրճեան, չօգնէ՞ք քիչ մը ինձի, եղբայրներ՛ր... ինչո՞ւ կայներ երեսս կը նայիք կոր...

Կարծեմ, ընթերցող, այսօր քիչ մ'աւելի շատախօսութիւն կ'ընեմ կոր, բայց ի՞նչ ընեմ, կարծիքներ կան, որոնք լակոնականով անհասկանալի կը մնան: Օ՛ն, խնդրոյն դառնանք, բայց դարձած ատեննիս չմոռնանք ըսելու, որ դուռը տունէն մեծ եղաւ, եթէ ուզէք՝ տունը դռան տեղ գործածեցէ՛ք... Հրէից կիները արդէն դուռը կը նստին:

Ըսի թէ՛ գրպանը ծակ եղողները բարի կ'ըլլան. տեսէ՛ք հիմա, թէ ինչո՞ւ ըսի:

Յայտնի է ձեզ, որ Գարատաղի հետ ալ պիտի հաշտուինք այս օրերս:

Անգղիոյ կառավարութիւնը հարիւր հազար ոսկի տալ խոստացեր է Գարատաղին՝ եթէ ասիկա ետ կենայ Թուրքիայէն հող ուզել:

Անգղիա ի՞նչ բարիք տեսաւ Գարատաղէն, որ անոր այսչափ ոսկի կու տայ կոր, Թուրքիա ի՞նչ բարեկամութիւն տեսաւ Գարատաղէն, որ անոր երկիր տայ:

Անգղիա այդ գումարը գարատաղցոց տալու տեղ հայերուն տալու ըլլայ նէ՛ աւելի քրիստոնէավայել եւ մարդասիրական գործ մը տեսած չըլլա՞ր, այդ գումարը գարատաղցոց տալով, զիրենք չը՞քաջալերեր. եւ ի՞նչ հարկ կայ տեղերնին հանգիստ չնստող մարդիկը վարձատրելու:

Աստուած իմ, մինչեւ ե՞րբ ասանկ մարդիկ պիտի փառաւորուին:

Սը՛սաթ... իրաւունք հզօրագունին...

Ինչո՞ւ սը՛սսթ, ինչո՞ւ գորութիւնը իրաւագունին պիտի չըլլայ եղեր:

Մէյ մ՛ալ ասանկ խօսք մի՛ ըներ. կը խնդան վրադ:

Ինչո՞ւ պիտի չընեն եղեր: Դիցուք թէ Բ. Դուռը անատակ որդւոյ մը հետ վարուելու պէս վարուի եւ քիչ մը բան գոհելով իր գարատաղցիին, մեզի ըսէ. «որդի իմ կորուսեալ էր եւ գտաւ», բայց Անգղիա ինչո՞ւ խնդրոյն մէջ կը մտնայ կոր եւ հարիւր հազար ոսկի կու տայ կոր անոնց, մինչդեռ ասդին հայերը գաւառաց մէջ անօթութենէ կը մեռնին կոր...

Կ՛աղաչեն, կը խնդրեն, չերկնցնենք այս խօսքը եւ բարիներուն համար չէ այս աշխարհը ըսելով՝ գոցենք այս խօսքը, որովհետեւ գայրոյթ կը զգամ կոր: Քիչ մ՛ալ ուրիշ բանի վրայօք խօսինք:

Քանի մը ժամանակէ ի վեր, շաբաթ մը չանցնիր, ուր Թուրքիա նոր դարագլուխ մը չունենայ:

Օրինակի համար, երբ ըսուեցաւ, թէ սահմանադրութիւն պիտի հրատարակուի՝ բոլոր թերթերը միաբերան ըսին.

Թուրքիան նոր դարագլու՛խ մը ունեցաւ:

Երբ սահմանադրութիւնը հրատարակուեցաւ՝ ամէնքը պոռացին.

Թուրքիան այսօր նոր դարագլուխ մը ունեցաւ:

Երբ քուէարկութիւնը կատարուիլ սկսաւ, նորէն աղաղակեցին.

Նոր դարագլուխ մ՛ալ այսօր ունեցանք:

Երբ երեսփոխանական ժողովը բացուեցաւ՝ դարձեալ գոչեցին.

Պերեքեաթ վերսին, նոր դարագլուխ մ՛ալ այսօր ունեցանք:

Թողունք այն անթիւ դարագլուխները, գորս ունեցանք դեսպանաժողովին
առաջարկութիւնները մերժած օրերնիս, եւ ուրիշ այլեւայլ պարագաներու մէջ:

Լրագիրները ամէն օր նոր դարագլուխ բերելու տեղ աւելի աղէկ կ'ընեն՝ եթէ
երկրիս մէջ գործուած զեղծումներուն բարձման համար ամէն օր
կատավարութեան ուշադրութիւնը հրաւիրեն:

Օրինակի համար. անցեալ կիրակի, խանի մը մէջ պատկող բեռնակիր մը
եկեղեցի երթալու համար՝ խանէն դուրս ելնելուն պէս՝ անկարիայի կը բռնուի եւ
նոյն օրը մինչեւ իրիկուն անօթի փորով գարի կը կրէ:

Խեղճ բեռնակիրը ի՞նչ հասկնայ հիմա այն նոր դարագլուխէն, եւ ասկից վերջ ո՞ր
բեռնակիրն է, որ յանդգնի կիրակի առտու մը եկեղեցի երթալ:

Խայալ անուն գաւեշտական թերթին խմբագիրը երեք տարի բանտարկութեան
դատապարտուեցաւ ծաղրանկար մը հրատարակած ըլլալուն համար:

Այս լուրը կարծեմ հաճոյ չթուեցաւ մեր գրիչին, որովհետեւ, կը տեսնեմ, որ
սովորականէն աւելի անհամ գրել սկսաւ:

Երեք տարի բանտարկութիւն...

Եւ ես տեղ մը կէս ժամէն աւելի նստիմ նէ՛ կը ճաթիմ:

Աղէկ որ ես ծաղրանկարը վերցուցեր եմ եղեր...

Յօդուածներուդ մէջ բան մը չե՞ն կրնար գտնալ:

Յօդուածներն ալ կը վերցունեմ, այնպէս կը հրատարակեմ. ի՞նչ ընեմ, երեք
տարի ո՞վ պիտի երթայ հոն նստի:

Գաղղիացի տիկնոջ ըրած կտակին ի՞նչ կ'ըսէք:

85000 (ութսունեփինգ հազար) ֆրանք թողուցեր է, որ անկար եւ խեղճ շուներուն համար հիւանդանոց մը շինուի:

Երանի այն կենդանեաց, որ Գաղղիոյ հպատակ են...

Անշուշտ այս հիւանդանոցը պիտի ունենայ իւր անկողիները, կերակուրը, բժիշկները, դեղերը եւն. հարկաւ հիւանդութենէ ելնող շուներուն օդափոխութեան համար գեղ մ'ալ պիտի յատկացուի:

Բժիշկներուն աչքը լոյս... ճիւղ մ'ալ աւելցաւ իրենց... ո՛վ գիտէ, ինչ փափաքով պիտի երթան իրենց հիւանդ շուներուն քով. անոնց բազկերակները պիտի քննեն, կուրծքերնուն, կոնակնուն մատով զարնելէն վերջը՝ ականջնին պիտի դնեն. «այս ջուրէն դգալ մը առտու, դգալ մը կէս օրին, դգալ մ'ալ իրիկունը պիտի խմէք, ծանր բաներ մի՛ ուտէք, քանի մը օր բրինձի ապուրով անցուցէ՛ք: Նայեցէ՛ք, որ չմսիք եւն. պիտի ըսեն»:

Շուներն ալ պոչերնին խաղցունելով պիտի հարցունեն.

Մէյ մ'ալ ե՞րբ պիտի գաք զիս տեսնելու:

Վաղը:

Վաղը դուրս ելնել կ'ուզէի:

Քանի մը օր մի՛ ելնէք:

Գործեր ունիմ, չեմ կրնար տունը նստիլ:

Թող տեսնեն մեր հոստեղի աներես շուները, որ փողոցը մէկու մը ձեռքը հաց, պանիր եւ կամ ձուկ, միս տեսնելնուն պէս՝ վրան կը ցատկեն եւ կը յափշտակեն. մսավաճառներու խանութէն չեն գատուիր. թող տեսնեն եւ սորվին՝ թէ պարկեշտ շուները ինչպէս կը հոգացուին:

Ո՛րչափ երախտապարտ կ'ընէր զմեզ յիշեալ տիկինը, եթէ շինելիք հիւանդանոցին քով բանտ մ'ալ շինել տար մեր շուներուն համար, որոնց ձեռքէն

խալսելու համար տուներնիս միս տանելու, փողոցը հաց ուտելու մեծ դժուարություններ կը քաշենք:

Խիկա՛ր, ինչո՞ւ վերցուցիր կամիքներն:

Անոր համար, որ չէզոքություն պահել ստիպուեցայ:

Ինչո՞ւ չէզոքություն պիտի պահես:

Որովհետեւ շահերս այդպես կը պահանջեն: Բայց երբ տեսնեմ, որ չէզոքությունն շահերուս դպչիլ կը սկսի, այն ատեն չէզոքությունս պիտի կորսնցնեմ:

Փառք Աստուծոյ, գրելու բա՞ն կը պակսի. դիւանագէտներու վրայօք գրելու տեղ՝ աղջիկներու վրայ կը գրեմ, բրոթոքոլներու, մանիֆեսթներու վրայօք խօսելու տեղ՝ մոտաներու վրայ կը գրեմ, դիւանագէտները կամթելու տեղ՝ աղջիկները կը կամթեն:

Թող կու տա՞ն:

Ինչո՞ւ թող չպիտի տան, աս ալ քաղաքականութեան վերաբերեալ բան մը չէ ա՛, աս խնդրոյն վրայ մի՛ գրեր, ան խնդրոյն վրայ զգուշութեամբ գրէ՛, միս խնդրոյն հետ զգուշութեամբ վարուէ՛, ասոր վե՞րջը:

Եթէ կ'ուզես՝ խոհեմութեամբ մի՛ վարուիր, Տպագրական տեսչութեան նոր ազդարարութիւնը կարդացիր ա՛: Օր մը կը նայիս, որ առտուանց գրասենեակդ երթալուդ պէս՝ գրասեղանիդ վրայ թուղթ մը կը գտնես. կ'առնես եւ կը կարդաս.

«Նկատելով, որ Թատրոնը այսինչ թուոյն մէջ այսինչ յօդուածը հրատարակած է, թուականէս մինչեւ երեք ամիս դադարեալ պիտի մնայ»:

Այս թուղթին վրայ կը սկսիս երեք ամիս պտտիլ Պոլսոյ փողոցները:

Գոնէ փողոցները մաքուր եւ կանոնաւոր ըլլային... մարդս այնչափ յոգնութիւն չէր կրեր: Բայց ինչո՞ւ պտտիմ. երեք ամսուան համար գործ մը կը գտնամ:

Ի՞նչ գործ:

Նիկողոս մարգարէին պէս գուշակութիւններ կ'ընեն. պատերազմի դաշտէն լուր կը գուշակեն, Պասիփեթի կը տանիմ կը ծախեն:

Ստակ կու տա՞յ մի:

Ինչո՞ւ չպիտի տայ... շատ նեղը մնամ նէ՛ Բոթի կ'երթամ թորբիլ կը հանեն, հատը մէկ ոսկիի կը ծախեն:

Հանողը հանեց զանոնք, ալ չմնաց, որ հանես:

Եղբայր, դուն ալ բոլոր դոները կը գոցես կոր. քու հաշուովդ մարդս անօթութենէ մեռնելո՞ւ է:

Ի՞նչ կարծեցիր հապա, աս ժամանակի մէջ գործ գտնելը դիւրի՞ն բան է:

Վիպասանութիւն մը կը գրեն ու կը հրատարակեն:

Անօթի մնալու համար աղէկ գործ է:

Վաճառականի մը քով գանձապետ կ'ըլլամ, օրին մէկն ալ սնտուկը կ'առնեն, կը փախչին:

Ձեռքէդ չգար:

Ասոր վե՞րջը:

Ասոր վերջը խելքդ ժողվելով անանկ յօդուածներ կը գրես, որ մէկուն չեն դպչիր:

Կ'աղաչեն, խնդրոյ մը վրայ երգիծական յօդուած մը գրած ունի՞ս, որ մէկու մը չդպչի, գրած ունիս եթէ անանկ բան մը՝ ցցուր ինձի, որ իբրեւ օրինակ առջեւս դնեն ու անոր հետեւիմ:

Գրած չունիմ, դուն գրել աշխատելու ես, որ չգոցուիս:

Օրինակի համար, մի՛ ըսեր, թե օրհորդ Մարգարիտը ամեն օր ատուրնէ մինչեւ իրիկուն կը պտտի եւ տունը չնստիր բնաւ, այլ ըսէ՝ թէ շատ պտտիլ պատիւ չբերեր աղջիկներուն, մի՛ ըսեր՝ թէ Պասիրեթը, Լեւրնթը, Վարըթը, Լա Թիւրքին, Լրագիրը սուտ լուրեր կու տան կոր, այլ ըսէ՝ թէ լրագիրներուն չվայեր սուտ լուրեր տալը. մի՛ ըսեր՝ թէ այսինչ Էֆենտին քանի մը տարիէ ի վեր ազգային գործերու շնորհիւ կ'ապրի. այլ ըսէ՝ թէ ով որ իր խանութը, գործը կը ձգէ եւ ազգային գործերէն դուրս չելներ, չի կրնար պատիւ եւ համարում գտնել. այսպէս ըսելով մարդ վիրաւորած չես ըլլար:

Շատ աղէկ, այնպէս կ'ընեն...

Սկսէ՛, նայիմ:

Լաւ. պաշտօնի գլուխ գտնողներուն չվայեր օրը երկու անգամ հրաժարական տալ:

Տեսա՞ր, մէկու մը չդպաւ:

Պօղոս առաքեալը ասկից տասնեւինը դար առաջ Տիմոթէոսին եւ հռովմէացոց շրջաբերական մը գրեց եւ այս շրջաբերականը պատրիարք մը ստորագրեց:

Տեսա՞ր, ինչ անուշիկ կ'ըլլայ կոր:

Քաղաքական ժողովի անդամ ըլլալով՝ դատ վարող մէկու մը պոնոն դրկելը աղէկ բան չէ:

Աս ալ աղէկ:

Պարապ բան է մէկուն ըսելը՝ թէ ես քուկին ստակիդ պէտք չունիմ, քանի որ անիկա քեզի ստակ տալու խօսք մը ըրած չէ եւ մանաւանդ թէ անուղղակի կերպով քեզի ստակ չտալիքն ալ յայտներ է:

Տեսա՞ր, այս եղանակով ոչ ոք կը վիրաւորուի:

Լուր մը չեղած ատենը յաւելուած հանելը պարզապէս ասագակութիւն ընել ըսել է:

Այո՛, այնպէս է:

Միշտ երկու կողմը կոտորուելով քալող եւ ինքզինքը թուալեթի տուող կրօնաւորներէն զգուշանալու է:

Ճիշտ է:

Ըսել է, որ այս եղանակով հարիւր տարի ալ գրելու ըլլամ՝ բնաւ չեմ գոցուիր:

Այո՛:

Տեսնենք:

Տեսնելու հարկ չկայ, աշխատէ՛, որ այս ընթացքէն շշեղիս:

Բայց թէ որ այս ընթացքին մէջ խղդուելու ըլլամ՝ այն ատեն ի՞նչ պիտի ըսես:

Այն ատեն պիտի ըսեմ, թէ ով որ լրագրին չգոցուելուն կը փափաքի, պէտք է որ իր ձեռքովը դադրեցունէ գայն: Մնաք բարով:

Երթաք բարով: